22 օգոստոսի 2019 թվականի N 1088 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29- Ի N 1028-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ ու 56-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ ու 5-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի ու 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29–ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մղարթի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Մղարթի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1028-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «707,0» թիվը փոխարինել «707,04366» թվով,

բ. «12,45» թիվը փոխարինել «12,49366» թվով.

2) որոշման 3-րդ կետում՝

ա. «ա» ենթակետում «707,0» թիվը փոխարինել «707,04366» թվով,

բ. «բ» ենթակետում «203,37» թիվը փոխարինել «203,32634» թվով.

3) որոշման N 4 հավելվածում՝

ա. «Բնակավայրերի» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Բնակավայրերի	12,49366	7,64	0,075634

»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«

Ընդամենը	707,04366	16,87	203,32634

».

4) որոշման N 6 հավելվածում՝

ա. հավելվածը «029-008» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

029-014	0,04366								ուսուցչի տուն

»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ընդամենը	12,49366	9,85	0,1	0,80			0,81		

».

5) որոշման N 7 հավելվածի՝

ա. «029-010» տողում «0,80» թիվը փոխարինել «0,75634» թվով,

բ. «Ընդամենը» տողում «0,80» թիվը փոխարինել «0,75634» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 29
Երևան